Խորհրդի 91/271/ԵՏՀ հրահանգը՝ դրա I հավելվածով սահմանված որոշ պահանջների մասով փոփոխող՝ Հանձնաժողովի 1998 թվականի փետրվարի 27–ի 98/15/ԵՀ հրահանգ

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

Պաշտոնական տեղեկագիր L 067 , 07.03.1998թ., էջեր 0029 - 0030

Խորհրդի 91/271/ԵՏՀ հրահանգը՝ դրա I հավելվածով սահմանված որոշ պահանջների մասով փոփոխող՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 1998 թվականի փետրվարի 27–ի 98/15/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» Պայմանագիրը,

հաշվի առնելով քաղաքային կեղտաջրերի մաքրմանը վերաբերող՝ 1991 թվականի մայիսի 21–ի 91/271/ԵՏՀ հրահանգը (1) և, մասնավորապես, դրա 5–րդ հոդվածի 3–րդ պարբերությունը,

քանի որ 91/271/ԵՏՀ հրահանգի I հավելվածի 2–րդ աղյուսակում ներկայացված՝ քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից էվտրոֆիկացման ենթակա խոցելի գոտիներ հեռացվող արտանետումներին ներկայացվող պահանջները մեկնաբանման հետ կապված խնդիրներ են առաջացրել, որոնց հստակեցումը կարևոր նշանակություն ունի. և քանի որ, արդյունքում, անհրաժեշտ է փոփոխել հրահանգի I հավելվածի 2–րդ աղյուսակը,

քանի որ սույն Հրահանգով նախատեսված ակտերը համապատասխանում են 91/271/ԵՏՀ հրահանգի 18–րդ հոդվածով նախատեսված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

91/271/ԵՏՀ հրահանգի I հավելվածը փոփոխվել է սույն Հրահանգի հավելվածին համապատասխան;

Հոդված 2

Անդամ պետությունները սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական ակտերը գործողության մեջ են դնում ոչ ուշ, քան մինչև 1998 թվականի սեպտեմբերի 30-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից նշված ակտերի ընդունման դեպքում, դրանցում պետք է հղում պարունակվի սույն Հրահանգին, իսկ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում դրանք պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու եղանակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

Հոդված 3

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակմանը հաջորդող 20–րդ օրը:

Հոդված 4

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1998 թվականի փետրվարի 27 -ին:

(1) ՊՏ L 135, 30.05.1991թ., էջ 40

ՀԱՎԵԼՎԱԾ

91/271/ԵՏՀ հրահանգի I հավելվածի 2–րդ աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ 2. Քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից էվտրոֆիկացման ենթակա խոցելի գոտիներ հեռացվող արտանետումներին ներկայացվող պահանջները, որոնք սահմանված են II.Ա(ա) հավելվածում: Կարող է կիրառվել մեկ ցուցանիշը կամ երկու ցուցանիշը միասին՝ կախված տվյալ իրավիճակից: Կիրառվում են կոնցենտրացիաների կամ նվազեցման տոկոսի արժեքները:

ԱՂՅՈՒՍԱԿ

Ցուցանիշներ	Կոնցենտրացիա	Նվազեցման նվազագույն տոկոսը (1)	Չափման ստանդարտ մեթոդներ
Ընդհանուր ֆոսֆոր	2 մգ/l (10 000-ից մինչև 100 0000 բնակչի հաշվով) 1 մգ/լ (100 000–ից ավելի բնակչի հաշվով)	80	Մոլեկուլային կլանման սպեկտրաչափական մեթոդ
Ընդամենը ազոտ (2)	15 մգ/լ (10 000–ից մինչև 100 000 բնակչի հաշվով) (3) 10 մգ/լ (100 000–ից ավելի բնակչի հաշվով) (3)	70-80	Մոլեկուլային կլանման սպեկտրաչափական մեթոդ

(1) Կեղտաջրերի մաքրման կայան մուտք գործող ջրի ծանրաբեռնվածության նվազեցումը:

(2) Ընդհանուր ազոտ նշանակում է ազոտի՝ ըստ Կյելդալի հաշվարկած պարունակության (օրգանական և

ամոնիակային ազոտ), նիտրատ–ազոտի և նիտրատ–ազոտի հանրագումարը:

(3) Կոնցենտրացիայի նշված արժեքները I հավելվածի Դ.4(գ) պարբերության մեջ նշված միջին տարեկան արժեքներն են: Այնուամենայնիվ, ազոտին ներկայացվող պահանջները կարող են ստուգվել՝ կիրառելով միջին օրականը, եթե ապացուցվում է, որ I հավելվածի Դ.1 պարբերությանը համապատասխան, հնարավոր է ապահովել պաշտպանության նույն մակարդակը: Այս դեպքում միջին օրականը չպետք է գերազանցի բոլոր նմուշների ընդհանուր ազոտի 20 մգ/լ–ը, եթե հոսքաջրի ջերմաստիճանը կենսաբանական ռեակտորում 12 °C–ից բարձր է կամ հավասար է դրան: Ջերմաստիճանին վերաբերող պայմանները կարող են փոխարինվել շահագործման ժամանակի սահմանափակմամբ՝ հաշվի առնելով տարածաշրջանային կլիմայական պայմանները:»